

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱՐ - ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ.
ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՂԱՐՎԵՍՏ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ¹

ՀՏԴ 82.091

DOI 10.56246/18294480-2022.12-28

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՆԱԻՐԱ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ nairahambardzumyan@yahoo.com

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող
էլփոստ՝ siranush.parsadanyan.2014@mail.ru

Սրբուհի Տյուսաբը հայ առաջին վիպասանուհին է: Նրա ստեղծագործության առանցքը կանանց ազատագրության հիմնախնդիրներն էին՝ սոցիալ-տնտեսական, իրավական, կրթական, քաղաքական և ազգային գիտակցությունը, դրանց դրսևորումները և պաշտպանությունը: Տյուսաբը փորձում էր հիմնավորել նաև ազատագրության կարևոր նախապայմանը՝ աշխատանքի գաղափարը, որը անկախություն կապահովեր կնոջ համար: Մկրտիչ Պեշիկթաշյանը Ջարթոնքի սերնդի ազնիվ և համակրելի դեմքերից էր, ոչ միայն իբրև բանաստեղծ և թարերագիր, այլ նաև ազգասիրական վսեմ զգացումներով և անկեղծ ու յուրահավուրկ խառնվածքով օժույն ներհույն մտավորական:

Ուսումնասիրության նպատակը Սրբուհի Տյուսաբ - Մկրտիչ Պեշիկթաշյան ֆենոմենի բազմաշերտ նյութի գիտական համակարգումն է, ինչը կարևոր է հայ գրականության պատմության ընթացականության և զարգացման տեսանկյուններից:

¹ Հոդվածը տպագրվում է ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

Ուսումնասիրության խնդիրը Սրբուհի Տյուսաբ - Մկրտիչ Պեշիկթաշյան փոխառնչությունների արդյունքում անձնականությունից գեղարվեստ գիտակցված ընթացքի տեսանկյունից ապահովումն է: Կիրառել ենք կենսագրական և ֆենոմենոլոգիական մեթոդները:

Եզրակացություն: Անձնականությունից գեղարվեստ ճանապարհը հաճախ լի է հույզերով, զգացմունքներով, ապրումներով, և սակավ՝ բանականությամբ և արթուն դատողությամբ: Ակնհայտ է, որ Սրբուհի Տյուսաբ – Մկրտիչ Պեշիկթաշյան փոխհարաբերության հարցը քննելիս, ուսումնասիրողները, հիմնականում առաջնորդվել են ռոմանտիկ միակողմանիության ճանապարհով՝ նրանց փոխհարաբերություններում որոնելով առավելապես սիրային, քան գրական-գեղարվեստական և մշակութային կապերը:

Բանալի բառեր: Սրբուհի Տյուսաբ, Մկրտիչ Պեշիկթաշյան, Կ. Պոլիս, Նազլը Վահան, զարթոնքի սերունդ, քերթված, «Մասիս» շաբաթաթերթ, ֆենոմեն:

Ներածություն

Սրբուհի Տյուսաբ (Սրբուհի Վահանյան) - արևմտահայ կին գրող, բանաստեղծ, հրապարակախոս և հասարակական գործիչ:

Սրբուհի Տյուսաբը (Վահանեան) ծնվել է 1841 թվականին Կ. Պոլսի Միջագյուղ (Օրթագյուղ, Օրթաքյոյ) թաղամասում՝ Վահանյան ընտանիքում, որը Կաթողիկե համայնքի ազնվական գերդաստաններից էր: Սրբուհին դեռ մեկ տարեկան էր, երբ մահանում է նրա հայրը՝ Սարգիս Վահանյանը, ով կեսարացի էր, «ընտիր եւ պատուական անձ մը»: Իսկ նրա մայրը՝ Նազլը Վահանը (Վահանյան), մեծ հոգատարությամբ է շրջապատում դստերը, որպեսզի նա չափազանց սրությամբ չընկալի հոր կորուստը: «Մինչ մանկիկ էի, հայրս մեռավ, որը մնացի, սակայն որբութիւն չճանաչեցի, այնչափ մայրս բոլորովին սէր էր և անձնվիրութիւն»², - գրում է Սրբուհին: Մայրը՝ Նազլը Վահանը, ըստ Տյուսաբի, «մայր էր եզական. մայր պաշտելի և փարելի»³, նաև ժամանակի ամենազարգացած և հարգված հայ կանացից մեկն էր: Նա

² Շարության Ա., Սրբուհի Տիսաբ, «Զարթոնք», ԻԴ տարի, թիվ 213 (7032), էջ 2:

³ Նույն տեղում:

կեսարացի Արզումանյան ամիրայի դուստրն էր: Գիտեր հայերեն, ֆրանսերեն, հունարեն, իտալերեն, կրթասեր, ազգասեր, բարեգործ և հանրանվեր կին էր: Տյոաաբը մեծացել է մոր բարոյական դաստիարակության և ազդեցության ներքո: Նազը Վահանը ոչինչ չէր խնայում դստեր կրթության և դաստիարակության համար:

Սրբուհի Վահանյանը սկզբնական կրթությունը ստացել է Միջագյուղի ֆրանսիական դպրոցում և ուսանել է ֆրանսերեն, սակայն *զարթոնքը*, որ աստիճանաբար տարածվում էր Կ. Պոլսի Կաթողիկե համայնքում նրան մղում էր ավելի մոտենալու մայրենի լեզվին և մշակույթին: Այդպես ընդունված էր ժամանակի հարուստ հայ ընտանիքներում: Ֆրանսերենին զուգահեռ՝ ուսումնասիրել է նաև իտալերեն, հունարեն: Բնական գիտություններ և պատմություն է սովորել եղբոր՝ բնագետ և հասարակական գործիչ, օրենսգետ Հովհաննես Վահանյանի մոտ, ով քրոջից մեծ էր ինը տարով: Նա քիմիա և բժշկություն էր ուսանել Փարիզում և Կ. Պոլիս վերադառնալուց մի քանի տարի անց դարձել էր պետական բարձրաստիճան պաշտոնյա:

Սրբուհի Վահանյան - Մկրտիչ Պեշկեթաշյան ֆենոմենը

Երբ Սրբուհի Վահանյանը սկսեց աշակերտել իր ուսուցչի՝ Մկրտիչ Պեշկեթաշյանի մոտ, նա բոլորովին անձանոթ էր հայերենին և հայ մշակույթին: Սակայն Սրբուհի Վահանյանի կյանքում շրջադարձային էր ծանոթությունը բանաստեղծ և հասարակական գործիչ Մկրտիչ Պեշկեթաշյանի հետ: 1863 թվականին Սրբուհին քսաներկու տարեկան էր, երբ սկսեց հայերենի մասնավոր դասեր առնել բանաստեղծի մոտ:

Մկրտիչ Պեշկեթաշյանը *Զարթոնքի սերնդի* ազնիվ և համակրելի դեմքերից էր, ոչ միայն իբրև բանաստեղծ և թատերագիր, այլ նաև ազգասիրական վսեմ զգացումներով և անկեղծ ու յուրահատուկ խառնվածքով օժուն ներհուն մտավորական: Նա Սրբուհու մեջ սերմանում է հայրենասիրություն, սեր, հետաքրքրություն և հպարտություն իր ազգային արժեքների, ազգային գրականության, մշակույթի և պատմության նկատմամբ: Շատ աշակերտներ ուներ Մկրտիչ Պեշկեթաշյանը, սակայն *թուխ վարսերով հրեշտակ կուսիկը* առանձնահատուկ դերակատարություն ուներ նրա կյանքում, և այդ վերաբերմունքը նա արտահայտել է իր քերթվածներում: Այս առումով ուշագրավ է Պեշկեթաշյանի «Աշուն» բանաստեղծությունը, որի խորագիրը առաջին

հրատարակության մեջ՝ «Մատենագրութիւնք Մկրտիչ Պեշկեթաշլեանի» գրքում, ներկայացաւ ի «Առ Նե» ձևով:

Սակայն կոսիկ մի կայ փափուկ,
Բոլոր անձէն շնչէ գարուն,
Կուսիկ, որ դեռ թըլի մանուկ,
Հրեշտակ ի թուփս վարս ոլորուն:

Լո՛ւտ կաց, գիշերց սիրուն խոսնակ,
- Լըսե՛ մեկ մ ալ գյուր դայլայիկ.
Լո՛ւտ կաց, լուսին, երբ ի դաշնակ
Երթնեկեն մանու թաթիկք⁴:

Մկրտիչ Պեշկեթաշլեանի բանաստեղծաշարը (վաթսուն բանաստեղծություն) ընթերցելիս պարզում ենք, որ զգացմունքային այսօրինակ դրսևորումները շատ են նրա քերթվածներում: Նման եզրակացություն կատարելու հիմք են տալիս «Գարուն»⁵, «Դու զով խնդրես»⁶ քերթվածները, ապա «Առ զեփյուտն Ալեմտաղիի»⁷-ն, որը 1864 թվականին *Հրանս* կեղծանունով տպագրվել է «Սեր»⁸ պարբերաթերթում: Ուշագրավ է նաև «Ի՞նչ գեղեցիկ փափուկ ժամ էր» սիրային բանաստեղծությունը, որը առաջին անգամ տպագրվել է Ա. Պիպեոնյանի «Հուշարձան Մ. Պեշկեթաշլեանի. մեծ բանաստեղծի կյանքը և գործը»⁹ գրքում:

Ի՞նչ գեղեցիկ փափուկ ժամ էր,
Երբ առաջին անգամ տեսայ
Իմ սիրելոյս անուշ պատկեր
Յողատարափ դաշտին վըրայ:

Չունէր արփին այնչափ փայլմունք,
Եւ ո՛չ թռչնիկ՝ այնչափ երգեր

⁴ Պեշկեթաշլեան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 93:

⁵ «Գարուն» քերթվածի համար երաժշտություն գրել է Տիգրան Չոխաճյանը:

⁶ Քերթվածի երաժշտությունը հեղինակել է Սրբուհի Տյուաբը:

⁷ Պեշկեթաշլեան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 56:

⁸ Տե՛ս Հրանտ (Պեշկեթաշլեան Մ.), «Առ զեփյուտն Ալեմտաղիի», «Սեր», թիւ 6, էջ 23:

⁹ Պիպեոնյան Ա., «Հուշարձան Մ. Պեշկեթաշլեանի, մեծ բանաստեղծի կյանքը և գործը», Կ. Պոլիս, 1914:

Վարդք չունէին այնչափ բուրմունք,
Որչափ սրտիկս ունեցաւ սէր:¹⁰

Ընդամենը մեկ տարի անց Սրբուհին, ով կարդացել էր միայն եվրոպական հեղինակներին, արդեն տիրապետում էր հայոց լեզվին, պատմությանը, գրաբարին և գրաբար բանաստեղծություններ, ծոներ, բնության գովերգություններ էր գրում, արժանանում է ուսուցչի գոհությանը: Նրանք միասին ընթերցում էին Հայր Ղևոնդ Ալիշանին և Արսեն Բագրատունուն, Պեշիկթաշյանը երգում էր իր քերթվածների հիման վրա գրած մեղեդիները:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների ժամանակահատվածում Սրբուհի Վահանյանը գրել է Պեշիկթաշյանի զեյթունյան շարքի «Մահ քաջորդոյն»¹¹ հայրենասիրական բանաստեղծության երաժշտությունը, որը դարձրել է երգ: Իսկ Սրբուհու գրաբար բանաստեղծություններից մեկը՝ «Գարուն» խորագրով, 1864 թվականին Պեշիկթաշյանի նամակ-խնդրանքով Արսեն Բագրատունին տպագրել է «Բազմավեպի» օգոստոսյան համարում¹²: Պեշիկթաշյանի նամակը հետևյալ բովանդակությունն ուներ՝ «Գերապատիւ Տէր, Ամօք ինչ յառաջ յղեալ էի առ Ձեզ թուղթ մի ի ձեռն Ապտուլլահեան եղբարց¹³ ուղևորելոց ի Վենետիկ, և թէպէտ ցարդ չընկալայ զպատասխանին՝ այլ ոչինչ զարմանամ ընդ այն. հաճեալ եմ մանաւանդ, զի ոչ գողացայ զժամանակն և չվնասեցի ժամուցն նուիրելոց առ Միլտովն, առ Դէմոսթէն, առ Կիկերովն¹⁴ և առ Հոմեր. և կենակցելում յար ընդ այնքանոյ արսն ներեալ է, անշուշտ, քերել յուշոյն զՊեշիկթաշեան զոք. այլ տեղին, զոր գրաւեալ էք Դուք ի յիշատակիս, կամ և մնայ խոր և լայնատարած իբրև զհանճար Ձեր: Ընկալցիք ընդ գրոյս և զնամակ աշակերտուիւոյս Սրբուհի

¹⁰ Պեշիկթաշյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 97: Այս սիրային բանաստեղծությունը տպագրության է տրամադրել Երվանդ ԷՖ. Օգոստինյանը, Մկրտիչ Պեշիկթաշյանի մտերիմներից՝ գեղարվեստասեր Անտոն ԷՖ. Օգոստինյանի որդին, ով Ա. Պիպեռոյանին տրամադրել է նաև բանաստեղծություն-երգի եղանակը, որը վերցված էր հոջակավոր կոմպոզիտոր Դոնիցետտի «Լինդա դի Շամունիքս» (Linda di Chamounix) օպերայից: Տե՛ս Պիպեռոյան Ա., «Հուշարձան Մ. Պեշիկթաշյանի, մեծ բանաստեղծի կյանքը և գործը», Կ. Պոլիս, 1914: Դոնիցետտի «Լինդա դի Շամունիքս» օպերայի պրեմիերան տեղի էր ունեցել 1842 թվականի մայիսի 19-ին, Վիեննայում:

¹¹ Բանաստեղծությունը գրված է 1863 թվականի ձմռանը, Կ. Պոլսում:

¹² Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1864:

¹³ Խոսքը սուլթանի անձնական լուսանկարիչներ Ապտուլլահյան եղբայրների մասին է:

¹⁴ Դեմոսթենեսի և Կիկերոնի ճառերը Բագրատունու թարգմանությամբ լույս են տեսել «Ճաշակ հեղին և լատին թարգմանութեան» ժողովածուում, Վենետիկ, 1863:

Վահանեան օրիորդին՝ թողին Արզումանեանց¹⁵, մի ի ջերմ զարմացողաց Ձերոց. զարմանալի և ինքն ուշիմութեամբն և քերթողասէր ախօթակոք. նամակն, այն և՛ ուղերձն առ Ձեզ և քերթումն «Գարուն», յորս չիք ամեննին սրբագրութիւն, արդիւնք են միամեայ աշակերտութեան իւրոյ. «զԳարուն», եթէ այնպէս հաճոյ թուեսցի Ձեզ, տաջիք յեռուլ ի «Բազմավիպին», ի խրախոյս նմանասեռ հասակակցաց¹⁶: Չև մեկնեալ Ձեր քաղաքէս մերմէ ես և պ. Թովմաս Եսայեան խնդրեալ էաք ի Ձէնջ, և Ձեր խոստացեալ թարգմանել զԳերեզմանսն Տօսքուլօյի. արդ՝ յիշեցուցանեմք Ձեզ զխոստումն Ձեր: Խոնարհական ողջունիւ սիրոյ մնամ Գերապատութեանդ խոնարհ ծառայ Մկրտիչ Պեշիկթաշլեան, Կ. Պոլիս, 20 մայիսի, 1864»:¹⁷ Այս շրջանում նաև Պեշիկթաշլեանը ֆրանսերէն է թարգմանում Սրբուհու քնարական գործերը և ուղարկում է տպագրութեան Սյուլլի Պրյոտոմի կազմած և հրատարակած ժողովածուում: Պեշիկթաշլեանը ջանում էր Վենետիկի իր բարեկամներին ծանոթացնել Սրբուհու բանաստեղծությունները, աշխատում էր, որքան հնարավոր է, շատ տարածել և հաստատուն դարձնել նրա համբավը:

1867 թվականին, երբ պարզվում է Պեշիկթաշլեանի հիվանդությունը, և ուսուցչի վիճակը ավելի է բարդանում, օրիորդ Վահանյանը հաճախ է այցելում և օգնում նրան, հետևում, որ նա ընդունի բժշկի նշանակած դեղերը: «Հիւանդութեան վերջին շրջաններուն, Սրբուհին, գթութեան հրեշտակի մը պէս կ'երթար բանաստեղծին տունը լոյս եւ ուրախութիւն սփռելու օրհասական հիւանդին սնարին: Ընթերցումներ կ'ընէր հիւանդը սփոփելու համար եւ դեղերուն ժամը ժամին առնուելուն կը հսկէր: 1867ի վերջատրութեան բանաստեղծին վիճակը օր ըստ օրէ աւելի կը ծանրանար»¹⁸, - գրում է Մառի Աթմաճյանը:

¹⁵ Արզումանյանների թոռ օրիորդ Սրբուհի Վահանյանը ապագա վիպասանուհի Տյուսաբն է՝ Պեշիկթաշլեանի աշակերտուհին: Հայտնի է Պեշիկթաշլեանի և Տյուսաբի մտերմությունը, որն ավելին էր, քան ուսուցչի և աշակերտուհու սովորական համակրանքն ու նվիրվածությունը:

¹⁶ Տյուսաբի «Գարուն» բանաստեղծությունը տպագրվել է «Բազմավէպում», 1864 թվականի օգոստոսին անստորագիր, հետևյալ բացատրությամբ. «Ազգային ուսումնասեր պոլսեցի օրիորդի մը մեկ տարվան աշակերտության երկասիրություն է եղեր այս գրվածքս, զոր ի քաջալերս իրեն ջանիցը և ի գեղեցիկ հորդոր համազգի և ջանասեր օրիորդաց կը խնդրվինք հրատարակելու»:

¹⁷ Պեշիկթաշլեան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 464: Պեշիկթաշլեանի սույն նամակը առաջին անգամ տպագրվել է 1935 թվականի «Բազմավէպ»-ի հուլիս-օգոստոսյան համարում:

¹⁸ Աթմաճեան Մառի, Սրբուհի Տիսաբ, «Պայքար», Բոստոն, 1973, թիւ 59 (20196), 15 մարտի, էջ 2:

Գրականագետ Մինաս Թեղեղյանը հետևյալ տողերով է նկարագրում փոխադարձ այդ կապվածությունը. «Սրբուհի բոց մըն էր. թռչկոտուն, յարաշարժ, ծաղկե-ծաղիկ, կենսայորդ: Պեշիկթաշլեան՝ մոխրանալու սահմանուած կէս կրակ - կէս ածուխ հոգի մը... Բայց ո՞վ կրցած է տրամաբանութեան ծայնին բանալ սիրտը: «...» Պեշիկթաշլեան կը պատկանի խումբին մեր այն քերթողներուն, որոնք անհուն հողի մը կը պահեն իրենց աղաղուն ու տկար մարմնին մէջ, կամ մղուած են կեանքը լման ապրելու՝ երբ իրենց զգայարանները զարնուած են ճակատագրէն: Այսպէս ապրեցան Դուրեան, Տէրեան, Մեծարեւն, Զարիֆեան: Հիանդութիւնը քայքայած էր ասոնց թոքերը, բայց ապրելու տենչը բռնած էր անոնց ամբողջ էութիւնը: Ապրիլ ուզելու եւ չկարենալու ապրելու տառապանքէն է բոլորին ալ ողբերգութիւնը»¹⁹: Հետևաբար, երբ տրտմության և խաղաղության երգերի բանաստեղծ Մատթեոս Զարիֆյանը գրի էր առնում իր անձնական ապրումները ցոլացնող հուշերը՝ «Սէր եւ թոքախտ միեւնոյն կուրծքին մէջ, աղուոր հրդեհ չէ՞, բոցերը կը հասնին մինչեւ քեզի, Աստուած»²⁰, մի պահ կարծես մոռացվում է, թե ավելի քան կես դար առաջ Մկրտիչ Պեշիկթաշլյանը նույն տառապանքը կրողն էր: «Կանխահասօրէն անհաւատ դարձած սկեպտիկ մըն է Զարիֆեան: Սէրերը, վիշտերը, խանդավառութիւններն ու յուսալքումները ծերացուցած են իր սիրտը: Զի՛ հաւատար ալլելա, չի կրնար հաւատալ: - Պզտիկ աղջիկ մ'ի՛նծի կ'ըսէ, Թէ զիս խենթի պէս կը սիրէ, Պզտիկ աղջիկ մը զիս սիրէ՛...»²¹:

Սրբուհի Վահանյան - Մկրտիչ Պեշիկթաշլյան մտերմությանը և փոխառնչություններին իր հայտնի՝ «Սրբուհի Տիաաբի հետքերուն վրայ. Սրբուհի Տիաաբ եւ Մկրտիչ Պեշիկթաշլյան» հոդվածում անդրադառնում է նաև Ինգա Սարըասլանը. «1867թ.-ի աշնան ողբերգական օրերը կը սկսին Պեշիկթաշլեանի համար, գամուած մահուան անկողնին: Սրբուհի կը մխիթարէ զինք, ամէն օր անոր սնարին մօտ նստած ընթերցումներ կատարելով եւ սփոփանքի խօսքեր արտասանելով: Սրբուհի կենսայորդ լոյս մը, երփներանգ տեսիլք մըն է մահամերձ բանաստեղծին համար: Մահուան առաւօտուն, այդ երփներանգ տեսիլքէն տարուած, հոգեվար քնարերգակը կը նս-

¹⁹ Թէօլէօլեան Մինաս, Դար մը գրականութիւն. 1850-1950, Գահիրէ, տպարան Յոաաբեր, 1955, էջ 156-157:

²⁰ Զարիֆյան Մատթեոս, «Օրագրության էջեր» (Քերթուածներ, օրագրութեան էջեր, նամակներ), խմբագիրներ՝ Սիրան Սեզա, Վահե Վահյան, Բեյրութ, 1956, Ատլաս, 656 էջ:

²¹ Խաժակ Վ., Եղեռնաբախտ քերթողներ, Պէյրութ, 1933, «Նաիրի» հրատարակչատուն, էջ 61:

տի անկողինն մէջ դողդոջուն մատներով. Թղթիկի մը վրայ, վերջին անգամ մը եւս կը հիւսէ, կը կերտէ սիրոյ յաւերժութիւնը»²²:

Հետազոտողներից ոմանք գտնում են, թե Մկրտիչ Պեշիկթաշյանի և Սրբուհի Վահանյանի միջև խորը հոգեկան ներդաշնակություն և փոխադարձ ներքին կապ է եղել²³, որը նաև որոշակի զգացմունքային արտահայտություն ուներ, սակայն սոցիալական և տարիքային տարբերությունը²⁴ խանգարել են դրանց զարգացմանը՝ «Անոնք իրարմէ բաժնուած էին ընկերային դասակարգի տարբերութեամբ եւ տարիքի խրամատով: Պեշիկթաշեանի կեանքի պայմանները բաական համեստ էին, առողջութիւնն ալ խախտու: Արդէն թոքախտը իր ահաւոր ճիրաններով բոյն դրած էր Պեշիկթաշեանի մարմնոյն մէջ»²⁵: Սոցիալական և տարիքային տարբերությունը նկատի ունենալով՝ Մառի Աթմաճյանը գրում է՝ «Պոխոյ մէջ այդ թուականներուն տարիքը ո՛չ մէկ աննպաստ դեր կրնար խաղալ ամուսնութեան մէջ, քանի որ հարուստ ծերունի մը կրնար շա՛տ դիւրաւ աղջկան մը ձեռքը խնդրել եւ յաջողիլ: Ընկերային եւ նիւթական դիրքերու եւ տնտեսական տարբերութեանց իրականութիւնն էր իսկական արգելքը Սրբուհիին եւ Պեշիկթաշյանին ամուսնութեան: Աղքատ էր բանաստեղծը եւ հիւանդ»²⁶:

«Սրբուհի Տյուաբ. կյանքը և գործը» մենագրության մէջ Ալբերտ Շարուրյանը կատարել է մի շարք բանասիրական ճշգրտումներ, փորձել է համակարգել տվյալներ և տեղեկություններ (հիարկե, ոչ լիարժեքորեն), որոնք վերաբերում են Տյուաբի կենսագրությանը: Գրքում ուշագրավ դիտողություններ կան Մկրտիչ Պեշիկթաշյանի և Սրբուհի Տյուաբի փոխհարաբերությունների առիթով: Այս տեսանկյունից էլ քննվում են Սրբուհի Տյուաբի գրական նախափորձերը չափածոյի տիրույթում: Ալբերտ Շարուրյանի համոզմամբ՝ հիմքեր կան կարծելու, թե Սրբուհի Վահանյանը նույնպես խոր և քնքուշ զգացմունքներ է ունեցել իր հիվանդ ուսուցչի հանդեպ²⁷, ում վաղա-

²² Սարըալան Ինգա, Սրբուհի Տիաբի հետքերուն վրայ. Սրբուհի Տիաբ եւ Մկրտիչ Պեշիկթաշյան, «Մարմարա», 2 հոկտեմբերի, 2006, էջ 1-2:

²³ Շարուրյան Ալբերտ, Սրբուհի Տյուաբ. կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1963, 250 էջ:

²⁴ Մենք կապելացիներն ենք նաև չափազանց աչալուրջ մայրը՝ Նազլը Վահանը, քանի որ նա ըստ հանգույն ընտրում էր այն ամենը և բոլորին, ինչ վերաբերվում էր, և ով առնչվում էր սիրելի դստերը: Հետևաբար չի բացառվում, թե այս դեպքում ևս խորհրդով օգնել է:

²⁵ Սարըալան Ինգա, «Սրբուհի Տիաբի հետքերուն վրայ Սրբուհի Տիաբ եւ Մկրտիչ Պեշիկթաշյան», «Մարմարա», 2 հոկտեմբերի, 2006, էջ 2:

²⁶ Աթմաճեան Մառի, Սրբուհի Տիաբ, «Պալքար» Բոստոն, 1973, թիւ 59 (20196), 15 մարտի, էջ 2:

²⁷ Նույն տեղում:

ժամ մահը²⁸ սգացել հայտնի «Ի Յիշատակ Պ. Մ. Պեշկեպաշևեանի»²⁹ ողբերգում, որը տպագրել է 1868 թվականի «Մասիս» շաբաթաթերթի դեկտեմբերի յոթի համարում՝ Սրբուհի Վահան ստորագրությամբ, որը միևնույն ժամանակ թե՛ յուրօրինակ հրաժեշտ է սիրելի ուսուցչին, թե՛ տիեզերական ազատությունն է խորհրդանշում, և այն, թե կյանքը մահ չունի, քանի որ հավերժական լույս է՝

Ոչ ևս է նա՝ ոյր մեղեդիք խանդավառ
Ի ցըրտահար վառ էին սիրտըս կայծ սիրոյ,
Երգոյն 'ի լուր՝ ատելութիւն, ոխ շիջանէր.
Աչկունք հրացայք գորովանօք ժըպտէին.
Եւ զիրերօք փարէին սիրտք բաժանեալք.
«Եղբարք եմք մեք» խընդաբարբառ ծայնեալ շուրջ:

Հանգի՛ր, անուն քո լիցի յօդ միութեան:
Հանգի՛ր, յուշ քո կեցցէ ցորչափ ազնիւն և լաւն,
Յորչափ հանճարըն պաշտեսցի, հանգի՛ր Ոգի՛:³⁰

Սրբուհին, իհարկեւ, մեծ հիացում ուներ ուսուցչի հանդեպ, սակայն ոչ սեր: Նա հարգանքով և նվիրումով էր վերաբերվում իր ուսուցչին: Մինչդեռ Սրբուհու հանդեպ Պեշկեպաշևյանի ջերմ համակրանքը գուցե վերածվել էր անհույս և խորունկ սիրո: Մկրտիչ Պեշկեպաշևյանի կյանքի վերջին յոթը տարիները, 1861 թվականի՝ Սրբուհու հետ ծանոթությունից մինչև իր մահը՝ 1868 թվականի նոյեմբերի քսաներկուսը, լի են հուզիչ իրողություններով և պատմություններով: «Մահուլնէն օր մը առաջ, - գրում է Սրբուհի Երիցյանը,- Վահանեան ընտանիքի ամենէն մօտիկ եւ մտերիմ բարեկամուհին,- դա՛րձեալ Օրիորդ Վահանեանին վրայ խորհելով կը գրէր տաղեր, անկողնին մէջ նստած, թուղթը ծունկներուն վրայ եւ մատիտով,- եւ կ'աւելցնէ, - Սրբուհին 20 տարեկան էր, երբ Մկրտիչ Պեշկեպաշևյանէն իբր ձօն կ'ընդունէր սիրոյ եւ ըզմայլանքի հրաշունչ գեղօններ, որուն Սրբուհին կը պատասխանէր տաղաչափեալ ոտանաւորներով»³¹:

²⁸ Մկրտիչ Պեշկեպաշևյանը մահացել է 1868 թվականի նոյեմբերի 22-ին:

²⁹ Վահան Սրբուհի, Ի Յիշատակ Պ.Մ. Պեշկեպաշևեանի, «Մասիս», 1868, 7 դեկտեմբերի, Կ. Պոլիս, էջ 4:

³⁰ «Մասիս», 1868, 7 դեկտեմբերի, Կ. Պոլիս, էջ 4:

³¹ Երիցյան Ա., Իմ ծանոթությունը Մ. Պեշկեպաշևյանի հետ, «Փորձ», 1887, թիւ 4, էջ 191:

Իր վերջին արձակ բանաստեղծությունը Պեշիկթաշյանը գրում է մահվան մահճում՝ «Երևցաւ նա ինձ» քերթվածը՝ «Երևցաւ նա ինձ, ո՛վ Աստուած իմ. արդեօք կի՞ն մ'էր, թէ՞ երեսոյթ սքանչելի: Քնքուշ էր նորա հայացքը, նման նայածոց լուսնակին. բիբ ցայգական թերբացիկ գիշերոյս վրայ: Կը քայլէր ու թռչնիկ մը թուեցաւ ինձ, որ կոստոստէր տերևէ տերեւ: Անոյշ էր ա- նոր ծայնն, ինչպէս ժպիտ մը ծաղկափթիթ կուսի, որ հիացիկ կզմայլի իւր երկնաստուր գեղոյն դիմաց: <...> Ո՛վ քոյր իմ, այո՛, քու ծայնդ նվագ մ'է, վճիտ ներդաշնակութեան մը, ո՛հ, երգէ՛, ուրեմն, երգէ՛ միշտ: Թո՛ղ նորածին առաւօտուն եւ համասփիտ գիշերուան ծոցոյն մէջ քու երկնասլաց մեղեդիքդ ծաւալանան: <...> Երգէ՛, և քու ծայնդ հոլաթևէ անբաւութեան մէջ, նման խնկոց ներդաշնակութեան: Երգէ՛, և թո՛ղ հրեշտակք ի լուր երգոցդ ըսեն՝ «Երկիրս կարժէ արքայութիւն մը»: Երգէ՛, եւ թոյլ տուր ինձ խանդաշարժ որո- րիլ»³²:

Եզրակացություն

Պեշիկթաշյանի բանաստեղծություններն ընթերցելիս հանդիպում ենք վերը նշված տրամադրություններով քերթվածների, որոնք ոչ լիարժեք, սա- կայն հիմք են դառնում՝ ենթադրելու՝ եթե եղել է հնարավոր սեր, ապա միա- կողմանիորեն: Ինչո՞ւ: Որովհետև արդի ժամանակներում ևս հանդիպում ե- նք տարիքային մեծ տարբերությամբ չիրացված սերերի, որոնք փոխադարձ անկեղծ հիացումից երբեք էլ սիրո չեն վերածվում, և որոնց ներքին տիրույթ- ներում գուցե գործում է երկու սեռերի (ոչ անձերի) միջև գոյություն ունեցող անհրաժեշտ քիմիան (հոգեկան և հոգևոր ներդաշնակությունը), սակայն դժ- վար է նրանց անվանել սեր(եր), քանի որ ես-ի նեղ-անհատական մակար- դակում տարբեր են ներանձնական և սոցիալական հիմքերը: Ուստի ան- ձնականությունից գեղարվեստ ճանապարհը հաճախ լի է հույզերով, զգաց- մունքներով, ապրումներով, և սակավ՝ բանականությամբ և արթուն դատո-

³² Առաջին անգամ տպագրվել է 1892 թվականի «Մասիս» շաբաթաթերթում, թիվ 3972, որին հրատարակության է հանձնել Գրիգոր Օտյանի քույրը՝ Եվփիմեն: Սույն արձակ քերթվածի ա- ութիով Հրանտ Ասատուրը վկայում է՝ «Հետևյալ անտիպ հատվածը Պեշիկթաշյանի ամենեն ետքի գրությունն է, մահվան առաջին օրը գրված, անկողնին մեջ, բարակ թուղթի մը վրա, մա- տիտով. Գրիգոր Օտյանի քրոջ որդին գնացած էր հիվանդատեսի, անոր հանձնած է ըսելով՝ Օտյանին տար, ու նույն օրը հոգին տված է: Ո՛վ է արդյոք, որ հուսկ վերջին վայրկյաններուն կ'երևա բանաստեղծին»: Պիպեռճյան Ա., «Հուշարձան Մ. Պեշիկթաշյանի, մեծ բանաստեղծի կյանքը և գործը», Կ. Պոլիս, 1914, էջ 132: Ըստ Հրանտ Ասատուրի՝ քերթվածը գրված է 1968 թվականի նոյեմբերի 28-ին:

ղությամբ: «Մենք պիտի ուզէինք Սրբուհին մէջ տեսնել Լամադթինի Էվլիոը, Վիգթոր Հիւկոյի Ժիվիէթ Տրուօն, Միաէի Ժօռժ Սանտը, Շառլ Պօտլէռի Մատամ Սապաթիէն, որոնք զգացին, գիտակցութիւնը ունեցան թէ ի՞նչ հազագիւտ եւ բացառիկ էակներու եւ հանճարներու անբացատրելի մէկ մենաշնորհովը եւ թէ ի՞նչ ներշնչումի, ոգետրութեան, ստեղծագործութեան նպաստող խանդավառ Մուսաներ դարձած էին անոնք, զիրենք սիրող բանաստեղծներուն համար: Սրբուհի Վահանեան այդ կիներուն ժամանակակիցն էր եւ տեղեակ էր շարք մը ռոմանթիք քերթուածներուն (որոնք դեռ այսօր ալ մէյ մէկ գլուխ-գործոցներ են, սիրոյ ըզգացումին նուիրուած) տուն տուող աղբիւրներուն. “Le Lac”, “Tristesse d'Olympio”, “Le Souvenir” եւ այլն հոչակաւոր քերթուածները արդէն հայերէնի ալ թարգմանուած էին այդ օրերուն՝ բանաստեղծ Յովհաննէս Սեթեանի եւ ուրիշներու կողմէ»³³, - դէպի զգացմունքն է ուղղվում նաև Մառի Աթմաճյանը:

Իսկ ժողովրդական բանահյուսությունը ինչեր ասես, որ չի հորինում: Ակնհայտ է, որ Սրբուհի Տյուաբ – Մկրտիչ Պեշկեթաշյան փոխառնչության հարցը քննելիս, ռաւումասիրողները առաջնորդվել են ռոմանտիկ միակողմանիության ճանապարհով՝ նրանց փոխհարաբերություններում որոնելով առավելապես սիրային, քան գրական-գեղարվեստական և մշակութային կապերը:

Սրբուհի Տյուաբը հայ առաջին վիպասանուհին է: Նա ավելի քիչ է ստեղծագործել (հազիվ տասը տարի), քան մյուս կին հեղինակները՝ Էլաիս Կեսարացյանը, Սիպիլը, Հայկանուշ Մառքը, Արշակուհի Թեոդիկը, Զարուհի Գալեմքարյանը, Զապել Եսայանը և այլք, սակայն այդ տասնամյակը կարևոր է հայ գրականության պատմության զարգացման օրինաչափությունների տեսանկյունից: Տյուաբի ստեղծագործության առանցքը կանանց ազատագրության հիմնախնդիրներն էին՝ սոցիալ-տնտեսական, իրավական, կրթական, քաղաքական և ազգային գիտակցությունը, դրանց դրսևորումները և պաշտպանությունը: Տյուաբը փորձում էր հիմնավորել նաև ազատագրության կարևոր նախապայմանը՝ աշխատանքի գաղափարը, որը անկախություն կապահովեր կնոջ համար:

Մկրտիչ Պեշկեթաշյանը *Զարթոնքի սերնդի* ազնիվ և համակրելի դեմքերից էր, ոչ միայն իբրև բանաստեղծ և թատերագիր, այլ նաև ազգասիրա-

³³ Աթմաճեան Մառի, Սրբուհի Տիւաբ, «Պալքար» Բոստոն, 1973, թիւ 59 (20196), 15 մարտի, էջ 2:

կան վսեմ զգացումներով, անկեղծ և յուրահատուկ խառնվածքով օծուն ներհուն մտավորական:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աթմաճեան Մ., Սրբուհի Տիսաբ (Իր ծննդեան 130-ամյակին առթիւ), «Պայքար», Բոստոն, 1973, թիւ 59(20196), 15 մարտի, էջ 2:
2. «Բազմավէպ», Վենետիկ, 1864:
3. «Բազմավէպ», Վենետիկ, 1935:
4. Երիցյան Ա., Իմ ծանոթությունը Մ. Պեշկեթաշյանի հետ, «Փորձ», 1887, թիւ 4, էջ 191:
5. Զարիֆյան Մ., «Օրագրության էջեր» (Քերթուածներ, օրագրութեան էջեր, նամակներ), խմբագիրներ՝ Սիրան Սեզա, Վահե Վահյան, Բեյրութ, 1956, Ատլաս, 656 էջ:
6. Թէօլէօլեան Մ., Դար մը գրականութիւն. 1850-1950, Գահիրէ, տպարան Յուսաբեր, 1955, էջ 156-157:
7. Խաժակ Վ., Եղեռաբախտ քերթողներ, Պէյրութ, 1933, «Նաիրի» հրատարակչատուն, 64 էջ:
8. Հրանտ (Պեշկեթաշյան Մ.), «Առ զեփյուռն Ալէմտաղիի», «Սեր», թիւ 6, էջ 23:
9. «Մասիս», 1892, թիւ 3972:
10. Շարուրյան Ա., «Սրբուհի Տիսաբ» (Ծննդյան 120ամեակին եւ մահուան 50ամեակին առթիւ), «Զարթօնք», ԻԴ տարի, թիւ 213 (7032), էջ 2:
11. Շարուրյան Ա., Սրբուհի Տյուսաբ. Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1963, 250 էջ:
12. Պեշկեթաշյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, 563 էջ:
13. Պիպեռճյան Ա., «Հուշարձան Մ. Պեշկեթաշյանի, մեծ բանաստեղծի կյանքը և գործը», Կ. Պոլիս, 1914:
14. Սարըալան Ի., «Սրբուհի Տիսաբի հետքերուն վրայ Սրբուհի Տիսաբ եւ Մկրտիչ Պեշկեթաշյան», «Մարմարա», 2 հոկտեմբերի, 2006, էջ 1-2:
15. Վահան Ա., «Ի Յիշատակ Պ. Մ. Պեշկեթաշլեանի», «Մասիս», 1868, 7 դեկտեմբերի, Կ. Պոլիս, էջ 4:

SRBUHI TUSAB AND MKRTICH PSHIKTASHLYAN: THE DIRECT PATH FROM PERSONALITY TO ART

HAMBARDZUMYAN NAIRA

*Candidate of Philology, Associate Professor,
Senior Researcher at the Institute of Literature
after Manuk Abeghian, NAS RA
e-mail: nairahambardzumyan@yahoo.com*

PARSADANYAN SIRANUSH

*PhD Student, Junior Researcher at the Institute of Literature
after Manuk Abeghian, NAS RA
e-mail: siranush.parsadanyan.2014@mail.ru*

Srbuhi Tusab is the first Armenian woman-novelist. The core of her work was the issues of women's emancipation: socio-economic, legal, educational, political and national consciousness, their manifestations, as well as the defense of the idea of work, which would ensure possible independence for women.

Mkrtich Peshiktashlyan was one of the honest, pleasant figures of the generation of *Awakening (Zartonk)*, not only as a poet and playwright, but also as an profound intellectual with noble patriotic feelings and sincere unique temperament.

The aim of the study is the scientific systemization of the multi-layered material of the Srbuhi Tusab-Mkrtich Peshiktashlian phenomenon, which is important from the view of the development and course of the history of Armenian literature.

The problem of the study is to ensure the visibility of the conscious flow from personality to art as a result of the interactions between Srbuhi Tusab and Mkrtich Peshiktashlian. We used biographical and phenomenological methods.

Conclusion: The path from personality to art is often full of sentiments, feelings, emotional experiences, and seldom of intelligence and vigilant judgment. It is obvious that when examining the relationship between Srbuhi Tusab and Mkrtich Peshiktashlyan, the researchers were mainly guided by a romantic unilateralism, seeking in their relationship more love than literary-artistic and cultural ties.

Keywords: *Srbuhi Tusab, Mkrtich Peshiktashlyan, Constantinople, Nazl Vahan, generation of awakening, work, weekly newspaper "Masis", phenomenon.*

СРБУИ ТЮСАБ И МКРТИЧ ПЕШИКТАШЛЯН: ПРЯМОЙ ПУТЬ ОТ ИНДИВИДУАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ К ИСКУССТВУ

АМБАРЦУМЯН НАИРА

*Кандидат филологических наук, доцент, старший научный сотрудник
Институт литературы имени Манука Абегяна, НАН РА
электронная почта: nairahambardzumyan@yahoo.com*

ПАРСАДАНЯН СИРАНУШ

*Аспирант, младший научный сотрудник
Институт литературы имени Манука Абегяна, НАН РА
электронная почта: siranush.parsadanyan.2014@mail.ru*

Србуи Тюсаб – первая армянская романистка. В основе ее творчества лежат вопросы женской эмансипации, проблемы социально-экономического, правового, образовательного, политического и национального осознания, их проявления, а также идея работы, которая способна обеспечить возможную независимость женщины.

Мкртич Пешикташлян был одним из самых искренних и интересных представителей *поколения Пробуждения*, не только поэт и драматург, но и проникновенный интеллигент, наделенный возвышенными патриотическими чувствами и честным необыкновенным характером.

Цель исследования – научная систематизация многоуровневого материала, посвященного феномену Србуи Тюсаб – Мкртич Пешикташлян, что является крайне важным с точки зрения хода и развития истории армянской литературы.

Задача исследования – обозначить видимую связь сознательного перехода от индивидуальных отношений к искусству, сложившегося в результате взаимоотношений между Србуи Тюсаб и Мкртичем Пешикташляном. Нами были применены биографический и феноменологический методы.

Выводы. Путь от индивидуальных отношений к искусству часто насыщен эмоциями, чувствами, переживаниями и, значительно реже, разумом и трезвыми суждениями. Очевидно, что при анализе вопроса о взаимоотношениях Србуи Тюсаб с Мкртичем Пешикташляном, исследователи в основном руководствовались романтической односторонностью, разыскивая во взаимоотношениях двух авторов прежде всего любовные, а не литературно-художественные и культурные связи.



Ключевые слова: Србуи Тюсаб, Мкртич Пешикташлян, Константинополь, Назлу Ваан, поколение пробуждения, литературное произведение, еженедельная газета «Масис», феномен.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.04.2022թ.:

Հոդվածը գրախոսվել է 26.04.2022թ.: